№ 62 Ապրիլ 12 (24) 1880 Ապրիլ 12 (24) № 62

ԻՆՆԵՐՕՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով

Թիֆլիսում գրվում են միշտ խմբագրատան մէջ։

Գտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Ռացի կիրակի և տօն օրերից)

Գայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Գայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի խօսք Էջմիածնին։—Ներքին տեսութիւն։ Յօգուտ սովալուկ հայերի։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Հին-Նախիջևանից։ Նամակ Ղզլարից։ Նամակ Կարսից։ Նամակ Ալդուսից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Վերամնայ։—Գրքերը չարաթաթերթը հայերի մասին։ Ֆրանսիա։—Մշակի հեռագիրներ։—Գայտարարութիւններ։

ՄԻ ԽՕՍՔ ԷՋՄԻԱԾՆԻՆ

Մենք ստացանք Բայազէտի, Բագրևանդի և Աշչերտի հայ հասարակութիւնից մի ուղերձ, բաղմաթիւ կնիքներով և ստորագրութիւններով, որի մէջ ամենասարսափելի գոյներով նկարագրված է, թէ որպիսի ցաւալի դրութեան մէջ է սովատանջ ժողովուրդը յիշեալ գաւառներում, և թէ որպիսի կոտորած է անում սովը, որ սպառնում է ամբողջ գաւառների ժողովրդին մի օրհասական վախճան։

Մի և նոյն ուղերձի հետ մեզ ուղարկված են երկու խնդիրների պատճէններ, որոնց մէկը մատուցած է եղել Վ. Եկ. Կաթողիկոսին, իսկ միւսը ռուսաց բարձր կառավարութեանը։ Այդ խնդիրների բովանդակութիւնը սովատանջների վերաբերութեամբ մի և նոյն սոսկալի իրողութիւններն է յիշեցնում, և չուտափոյթ օգնութիւն է խնդրում։

Ի միջի այլոց, սովատանջները հարց են առաջարկում, թէ որտեղ մնացին և ինչ եղան այն փողերը, որ պատերազմի ժամանակ ռուսաց հայերը նուիրեցին յանուն այնչերտցի գաղթականների, և եթէ տակաւին այդ նուէրներից մնացել է մի գումար, այժմ որտեղ է պահված և ո՞ր օրվայ համար։

Այդ հարցը, այդ պահանջը նոյնքան իրաւացի է, որքան կարևոր է, որքան անհրաժեշտ է։ Աղքատ և սովատանջ ժողովուրդը երեսը դարձրել է դէպի մեզ և ասում է. բարի մարդիկ զթացին իմ վրա, իմ անունով ողորմութիւն հաւաքվեցաւ, և ահա տարիներ անցան, դեռ չեմ ստացել այդ փողերը։ Տուեցէք մեր փողերը, տուեցէք, հայ գնենք, որ սովից չը մեռնենք...

Ինչ պէտք է պատասխաներ։ Դա սովեալ մարդու ձայնն է. դա սովեալ մարդու պահանջ է, որ քաղցի կատաղութեան մէջ իր սիրելի զաւակին էլ չէ խնայում... որ օրհասական յուսահատութեամբ մաքառում է մահուան հետ... որ սպասել կարող չէ...

Մեզ յայտնի է, որ պատերազմի ժամանակ Աշչերտի գաղթականների անունով հաւաքված նուէրները գումարվում էին երկու հիմնարկութիւնների մէջ. մէկը, Թիֆլիսի մանաժողովի ձեռքում, միւսը, Էջմիածնի վանքում։ Մեզ յայտնի է նոյնպէս, որ Թիֆլիսի մանաժողովը իր ձեռքում ունեցած գումարից մասամբ իր ժամանակին ծախսեց յիշեալ գաղթականների վրա, իսկ մնացածի մի մասը անցեալ տարվայ վերջերում ուղարկեց նոյն հասարակութեան պէտքերին գործ ածելու, և մի մասն էլ որպէս լսել ենք, յանձնեց «Դպրոցասիրաց-Երևելեան» ընկերութեանը, Աշչերտի գաւառում այդ ընկերութեան ջանքով բացված դպրոցի համար գործ ածելու նպատակով։ Այժմ մանաժողովի ձեռքում փող չէ մնացել։

Ինչ ասեց Էջմիածինը։

Էջմիածինը, փողերը իր դանձարանի մէջ դրած, իր յատուկ խոհեմ լռութեամբ, երկար մտածում էր, թէ ինչ պէտք է անել։ Աշչերտցի գաղթականները եկան մեր կողմերը, հիւանդացան, ջարդվեցան, կոտորվեցան, և մնացածները կրկին յետ դարձան իրանց հայրենիքը։ Բայց փողերը անշարժ մնացին Էջմիածնի դանձարանում։ Դա դեռ մտածում էր.... Շատերը մինչև անգամ մռայլեցան այդ փողերի դպրութեան մասին։ Բայց լռադրութիւնը դրժբաղդաբար սուր հոտառութիւն ունի. իր ժամանակին աղմուկ բարձրացրեց։ Ընցան ամիսներ, տարիներ,—պատասխան չը կար։ Վերջապէս «Արարատ» պաշտօնական ամսագիրը իր հանդիսանելից մէկի մէջ բարեհաճեց հրատարակել, որ սուրբ Էջմիածնի նստակ ունի այդ փողերով մի դպրոց հիմնել Աշչերտում։ Դիտաւորութիւնը բարի էր, եթէ գործադրված լինէր։ Բայց ցաւելով պիտի յայտնենք, որ սուրբ Էջմիածինը մինչև այսօր չը կատարեց իր խոստմանը։ Եւ «Արարատի» մէջ անցեալ տարի հրատարակված հաշիւների կարգում մենք գտանք 17,000 բուբլի աշչերտցոց փողերը, որոնք տակաւին պահված են Էջմիածնի գանձարանում։ Ո՞ր օրվայ համար, ի՞նչ նպատակով, —յայտնի չէ։

Եւ Էջմիածինը, որ այդպէս է վարվում հասարակութեան նուէրների հետ,—դեռ այսօր նոյն բարեսրտութեամբ ժապաւենեալ մատեաններ է բաժանել իր քահանաների ձեռքում, որ նորից նուիրատուութիւններ հաւաքեն տառակական Հայաստանի սովելոց համար...

Բայց Աշչերտի գաւառից հաւաչանք է լսվում. «սրբազան և սրբազնագոյն հայրեր, տուեցէք մեր փողերը, մենք չենք ուզում ձեր դպրոցը և ուսումը. այժմ մեզ հաց է հարկաւոր. մեր զաւակները մեռնում են սովից... Մեր ռուսաստանցի եղբայրները խղճացին մեզ վրա, մեզ ողորմութիւն արեցին, փող տուեցին, ի՞նչու է.ք պահել մեր փողերը...»

Կը լսվեն արդեօք այդ հաւաչանքները, և արդեօք բաւականութիւն կը տրուի նուիրատու հասարակութեանը, Էջմիածնի գանձարանում պահված 17,000 ր. աշչերտցոց դումարը սովեալների այժմեան պահանջին ծառայեցնելով։

Ց. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՍՈՎԱԼԱԼՈՒԿ ՀԱՅԵՐԻ

Ունենալով սեփական նոր շատ պատկերներ, որոնց դեռ ես հասարակութիւնը չէ տեսել և ցանկանալով ծանօթացնել հասարակութիւնը տեղական նկարիչների և նրանց աշակերտների հիմնականութիւնների հետ, ես նորից կարճ ժամանակով բաց եմ անում նկարչական պատկերահանդէսը յօգուտ սովալուկ հայերի, մուտքը 20 կոպէկով։ Ինդրում եմ բոլոր նկարիչներին և նրանց աշակերտներին, նոյնպէս և այն անձանց, որոնք ունեն լաւ պատկերներ, մեծ և փոքր չրջանաներ, կամ ուրիշ նկարչական հիմնականութիւններ, չը մերժել և մասնակցել այդ բարի գործին, ուղարկելով այդ առարկաները պատկերահանդէսը մինչև ապրիլի 15-ը։ Նկարիչներ Կոլչինի, Զանկավսկու և այս գործին համակրող պ. պ. Ն. Ն. Վիրուբովի, Ա. Ա. Կորգանովի, Ի. Ն. Ի. Ամատունու, Ա. Լ. Խարազովի, Դ. Բ. Տէր-Ազատուրովի շնորհիւ ես արդէն բաւական շատ պատկերներ եմ ձեռք բերել։ Բացի հին և նոր յայտնի արհեստաւորներից, պատկերահանդէսի մէջ կը լինեն հետևեալ ռուս նկարիչների ընդարձակները. Բրիւլովի, Ա. Յվանովսկու, Լագորիս, Տրուտովսկու, Ֆեդրիսովի, Բացիլովի, Բոգոլիւբովի, Գրեմացիի, Զանկավսկու կովկասեան տեսարանները և Կոլչինի պատկերները։ Առարկաների ապահովութեան համար պատկերահանդէսը պատասխանատու է։ Պատկերահանդէսը զտնվում է Գոլովինսկի փողոցի վրա, Նիսեվիտանը, Վասիլի լուսանկարչի տունը, մի և նոյն սանդուղքներով։ Պատկերահանդէսը պատկերներ ընդունելու համար բաց է ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 6 ժամը։ Յոյս ունեմ, որ ինչպէս նկարիչները և նկարչութեան ուսուցիչները, ուսուցիչները, տեսուչները, դիմանկարների տեսուչները և դիրեկտորները, իշխանութիւն ունեցող անձինք և տեղական ինտելիգենցիան չեն մերժի օգնել ինձ այդ օգտակար և բարձր գործը կատարելու համար։ Այդ գործի հետևանքները և հաշիւները իր ժամանակին կը հրատարակեմ լրագրների մէջ։ Պատկերահանդէսի բացման օրվայ մասին կը յայտնվի լրագրների մէջ։

Ա. Միրզոեվ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մարտի 18-ին

Վերջապէս մարտի 9-ին կայացաւ Լազարեան ճեմարանի դահլիճներում այն երաժշտական երեկոն յօգուտ վնասեցոց, որի մասին ես արդէն ձեզ գրած եմ և որը պէտք է լինէր փետրվարի 28-ին։ Վարդանանց տօնի օրը։ Պէտք է ասել, որ երաժշտական-գրականական երեկոն դարձաւ միայն խիստ երաժշտական՝ առանց գրականական մասի, որպէս և փոխանակ Վարդանանց տօնի օրը լինելու՝ յետաձգվեցաւ մինչև մեծ պաս—մի փոխանութիւն, որ զրկեցաւ կենցերտի վարչութենից բոլորովին անկախ և հանդուգն նորա կամքից—ձնարիտ է, ցաւալի է, որ չը կարողացաւ իրագործվել կենցերտի նախկին ծրագիրը—երաժշտական-գրականական մի հոյակապ երեկոյ, որ Մոսկվայում դեռ երբէք չէ եղած. բայց պատճառ մոխթարանքը այն է, որ Մոսկվայի հայ հասարակութիւնը, բացի մի երկու պարծանքներից, որոնք իրանց անփոխարինելիութեամբ միշտ պատրաստ են արգելք լինել ամեն մի հասարակաշահ ձեռնարկութեան և արտնվում այս կամ այն գործի վրա, որ սկսած էր առանց նրանց անմիջական թելադրութեան և հրամանի... մխիթարանքը, ասում եմ, այս դէպքում այն է, որ հասարակութիւնը՝ ինչպէս և միշտ, մեծ համակրութեամբ ընդունեց երաժշտական երեկոն. միայն կարմից՝ այդ երեկոյի նպատակը իրագործվեցաւ անմիջապէս յաջողութեամբ—մի հանգամանք, որ մեր պաւարտ հոգսն էր և մտածմունքը։

Այժմ մի քանի խօսք բուն կենցերտի մասին։ Բացի տեղւոյս արժանապ. հայր Սարգիսեանցից, որ երաժշտական երեկոյի սկզբնաւորողն է՝ առանձին համակրութիւն ցոյց տուեց այդ բարենպատակ եմ բոլոր նկարիչներին և նրանց աշակերտներին, նոյնպէս և այն անձանց, որոնք ունեն լաւ պատկերներ, մեծ և փոքր արձաններ, կամ ուրիշ նկարչական հիմնականութիւններ, չը մերժել և մասնակցել այդ բարի գործին, ուղարկելով այդ առարկաները պատկերահանդէսը մինչև ապրիլի 15-ը։ Նկարիչներ Կոլչինի, Զանկավսկու և այս գործին համակրող պ. պ. Ն. Ն. Վիրուբովի, Ա. Ա. Կորգանովի, Ի. Ն. Ի. Ամատունու, Ա. Լ. Խարազովի, Դ. Բ. Տէր-Ազատուրովի շնորհիւ ես արդէն բաւական շատ պատկերներ եմ ձեռք բերել։ Բացի հին և նոր յայտնի արհեստաւորներից, պատկերահանդէսի մէջ կը լինեն հետևեալ ռուս նկարիչների ընդարձակները. Բրիւլովի, Ա. Յվանովսկու, Լագորիս, Տրուտովսկու, Ֆեդրիսովի, Բացիլովի, Բոգոլիւբովի, Գրեմացիի, Զանկավսկու կովկասեան տեսարանները և Կոլչինի պատկերները։ Առարկաների ապահովութեան համար պատկերահանդէսը պատասխանատու է։ Պատկերահանդէսը զտնվում է Գոլովինսկի փողոցի վրա, Նիսեվիտանը, Վասիլի լուսանկարչի տունը, մի և նոյն սանդուղքներով։ Պատկերահանդէսը պատկերներ ընդունելու համար բաց է ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 6 ժամը։ Յոյս ունեմ, որ ինչպէս նկարիչները և նկարչութեան ուսուցիչները, ուսուցիչները, տեսուչները, դիմանկարների տեսուչները և դիրեկտորները, իշխանութիւն ունեցող անձինք և տեղական ինտելիգենցիան չեն մերժի օգնել ինձ այդ օգտակար և բարձր գործը կատարելու համար։ Այդ գործի հետևանքները և հաշիւները իր ժամանակին կը հրատարակեմ լրագրների մէջ։ Պատկերահանդէսի բացման օրվայ մասին կը յայտնվի լրագրների մէջ։

Ա. Միրզոեվ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մարտի 18-ին

Վերջապէս մարտի 9-ին կայացաւ Լազարեան ճեմարանի դահլիճներում այն երաժշտական երեկոն յօգուտ վնասեցոց, որի մասին ես արդէն ձեզ գրած եմ և որը պէտք է լինէր փետրվարի 28-ին Ս. Վարդանանց տօնի օրը։ Պէտք է ասել, որ երաժշտական-գրականական երեկոն դարձաւ միայն խիստ երաժշտական՝ առանց գրականական մասի, որպէս և փոխանակ Վարդանանց տօնի օրը լինելու՝ յետաձգվեցաւ մինչև մեծ պաս—մի փոխանութիւն, որ զրկեցաւ կենցերտի վարչութենից բոլորովին անկախ և հանդուգն նորա կամքից—ձնարիտ է, ցաւալի է, որ չը կարողացաւ իրագործվել կենցերտի նախկին ծրագիրը—երաժշտական-գրականական մի հոյակապ երեկոյ, որ Մոսկվայում դեռ երբէք չէ եղած. բայց պատճառ մոխթարանքը այն է, որ Մոսկվայի հայ հասարակութիւնը, բացի մի երկու պարծանքներից, որոնք իրանց անփոխարինելիութեամբ միշտ պատրաստ են արգելք լինել ամեն մի հասարակաշահ ձեռնարկութեան և արտնվում այս կամ այն գործի վրա, որ սկսած էր առանց նրանց անմիջական թելադրութեան և հրամանի... մխիթարանքը, ասում եմ, այս դէպքում այն է, որ հասարակութիւնը՝ ինչպէս և միշտ, մեծ համակրութեամբ ընդունեց երաժշտական երեկոն. միայն կարմից՝ այդ երեկոյի նպատակը իրագործվեցաւ անմիջապէս յաջողութեամբ—մի հանգամանք, որ մեր պաւարտ հոգսն էր և մտածմունքը։

Այժմ մի քանի խօսք բուն կենցերտի մասին։ Բացի տեղւոյս արժանապ. հայր Սարգիսեանցից, որ երաժշտական երեկոյի սկզբնաւորողն է՝ առանձին համակրութիւն ցոյց տուեց այդ բարենպատակ